Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 2616-Ա 22.09 2021 թ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 2080-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Ուժը կորցրած ճանաչել Համալսարանի ռեկտորի 2020 թվականի սեպտեմբերի 02-ի «Համալսարանի ռեկտորի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 2913-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու և Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նոր կազմը հաստատելու մասին» թիվ 2080-Ա հրամանը:

2.Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհուրդը հաստատել հետևյալ կազմով.

1) Ռուզաննա Սադոյան –ֆակուլտետի դեկան +
2) Արմենուհի Փիլթակյան – ուսումնական գծով դեկանի տեղակալ +
3) Ներսես Սամվելյան –գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, արհմ. կոմ կազմ. նախագահ, ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ +
4) Կամո Վարդանյան- գիտահետազոտական կենտրոնի ղեկավար + +
5) Սամվել Պիպոյան – կ.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոնի վարիչ +
6) Նարինե Սահակյան- կ.գ.դ., դոցենտ, առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ +
7) Մեժլում Երիցյան- ք.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն +
8) Ինեսա Սիրեկանյան – ք.գ.թ. դոցենտ, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն –
9) Արմեն Առուստամյան- ք.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն –
10) Տիգրան Թանգամյան – մ.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն +
11) Գևորգ Կարապետյան – ա.գ.դ., պրոֆեսոր, աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոն
12) Վարուժան Հովհաննիսյան – կ.գ.դ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն +
13) Ալվարդ Կիրակոսյան- կ.գ.թ. դոցենտ, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն –
14) Անահիտ Մինասյան-մ.գ.թ., դոցենտ, աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոն + +
15) Լյուդմիլա Ավանեսյան- մ.գ.թ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն +
16) Սուսան Քոչինյան- Վ.Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն

17) Նարեկ Գրիգորյան- ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ
18) Անի Վիրաբյան-ուսանող
19) Հարություն Մկրտչյան– ուսանող
20) Հերիքնազ Ներսիսյան – ուսանող
21) Աննա Մամյան – ուսանող
22) Էրիկ Հովսեփյան – ուսանող
23) Անդրանիկ Շողերյան– ուսանող
24) Հայկանուշ Պողոսյան – ուսանող
25) Մերի Գալստյան– ուսանող

ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՇՈՏ ԽՈՒԵՑՅԱՆ

ՔԱՐՏԱՐԱՐ
СЕКРЕТАРИАТ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

2021թ. դեկտեմբերի 29-ի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգ

1. Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն /զեկուցող՝ Ռ. Սադոյան/
2. 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի քննական գրաֆիկի քննարկում և հաստատում /զեկուցող՝ Ա.Փիլթակյան/
3. Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի 2021թ.-ի գիտական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն /զեկուցող՝ Ն. Սամվելյան/
4. Բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում, 4-րդ կուրսերի թղթապանակների պաշտպանության հաշվետվություն: /զեկուցող՝ Ի.Սիրեկանյան/
5. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ աշխատանքների քննարկում: /զեկուցող՝ ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ/
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռ.Սադոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի 15 (տասնհինգ) անդամ

1. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: Ֆակուլտետի դեկանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ պատրաստ են հեռակա ուսուցման համակարգի դասացուցակները, 1-ին կուրս են հրամանագրվել 27 ուսանող, որոնց տրամադրվել են իրենց էլեկտրոնային հասցեները, բացի այդ, հեռակա համակարգում կա 6 վերականգնվող ուսանող և 1-ը դիմում է ներկայացրել առկա համակարգից հեռակա տեղափոխվելու համար: Հեռակա մագիստրատուրայի հետ կապված Ռ.Սադոյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետում գործող «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերի քննաշրջանը մեկնարկելու է 2022 թվականի հունվարի 10-ից, իսկ 3-րդ կուրսի մագիստրոսական աշխատանքների

նախապաշտպանությունը տեղի է ունեցել 2021 թվականի դեկտեմբերի 24-ին, որի արդյունքում ուսանողների աշխատանքները երաշխավորվել են հրապարակային պաշտպանության, որը տեղի է ունենալու 2022 թվականի փետրվարի 4-ին:

Խոսելով հեռակա բակալավրիատի ուսումնական գործընթացի ձևաչափի մասին, Ռ.Սադոյանը հայտնեց, որ պայմանավորված հանրապետությունում տիրող համաճարակային իրավիճակով առաջարկվում է դասերը հնարավորության դեպքում կազմակերպել առցանց, իսկ միջանկյալ ստուգումները պարտադիր կերպով առերես ձևաչափով:

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Ն.Սահակյանը: Վերջինս տեղեկացրեց, որ բուհի աշխատակիցների շուրջ 80%-ը պատվաստված են, սակայն հեռակա բակալավրիատի դասերն առերես կազմակերպելը ռիսկային է և կարող է բուհում վարակման օջախ առաջանալ, քանի որ ուսանողների դեպքում թեստի առկայությունը պարտադիր չէ:

Ռ.Սադոյանը քվեարկության դրեց հեռակա բակալավրիատի դասերն առցանց, իսկ միջանկյալ ստուգումներն առերես ձևաչափով կազմակերպելու մասին առաջարկություն ներկայացնելու հարցը:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 13

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Որոշեցին՝

Ներկայացնել առաջարկ հնարավորության դեպքում հեռակա բակալավրիատի դասերն առցանց, իսկ միջանկյալ ստուգումներն առերես ձևաչափով կազմակերպելու մասին:

2. **Լսեցին՝**

Ա.Փիլթակյանի հաղորդումը 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննական գրաֆիկի մասին: Դեկանի տեղակալը հայտնեց, որ առկա համակարգի քննաշրջանը մեկնարկում է 2022 թվականի հունվարի 10-ից և տևելու է մինչև հունվարի 25-ը ներառյալ, կազմված են քննական գրաֆիկները, որոնք նախապես քննարկվել են ուսանողների հետ և համապատասխանեցվել դասախոսների ծանրաբեռնվածությանը:

Որոշեցին՝

- Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննական գրաֆիկը:
- Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ն.Սամվելյանի հաղորդումը ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի 2021թ.-ի գիտական աշխատանքների վերաբերյալ: Դեկանի տեղակալը ներկայացրեց 2021 թվականի ընթացքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարված հրապարակումները (կցվում է, առդիր՝ 2 էջ):

Արտահայտվեցին՝

Ն.Սահակյանն առաջարկեց հրապարակումների ցանկում ներառել նաև առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի դասախոսական անձնակազմի կողմից կատարված հրապարակումները և տեղեկացրեց, որ իր, Գ.Մուշեղյանի և Գ.Արաջյանի կողմից 2021 թվականի ընթացքում տպագրված հոդվածները եղել են SCOPUS և Web of Science ցանկերում ընդգրկված պարբերականներում:

Որոշեցին՝

- Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի դասախոսական անձնակազմի կողմից կատարված հրապարակումների մասին տեղեկատվությունը ներառել ֆակուլտետի դասախոսական անձնակազմի հրապարակումների ընդհանուր ցանկում:
- Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝

Ռ.Սադոյանի հաղորդումը բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփման, 4-րդ կուրսերի թղթապանակների պաշտպանության հաշվետվության մասին: Դեկանը տեղեկացրեց, որ հարցը պետք է զեկուցեր ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար Ի.Սիրեկանյանը, որն առոջղական խնդիրների պատճառով բացակայում է, ուստի տեղեկատվությունը՝ համաձայն Ի.Սիրեկանյանի կողմից ուղարկված գրավոր զեկույցի կներկայացնի Ն.Սամվելյանը:

Ն.Սամվելյանն ընթերցեց բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփման և 4-րդ կուրսերի թղթապանակների պաշտպանության մասին Ի.Սիրեկանյանի հաշվետվությունը (կցվում է, առդիր՝ 1 էջ):

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը հայտնեց, որ շատ դեպքերում ուսանողները թերանում են հարցերին պատասխանելու գործում, ինչպես նաև թղթապանակներում նկատվում են կրկնություններ:

Ն.Գրիգորյանն առաջարկեց կազմակերպել մեթոդական սեմինարներ ուսանողների համար:

Ս.Պիպոյանն առաջարկեց ամբիոններում վերլուծել պրակտիկայի արդյունքները, գնահատել դրանք և լուծել դուրս բերված խնդիրները:

Կապված Ն.Գրիգորյանի առաջարկի հետ Ռ.Սադոյանը նշեց, որ «Կենսաբանության ուսուցման և տեսության մեթոդիկա» ու «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա» առարկաների շրջանակներում իրենք անցնում են այնդ ամենը, սակայն անհրաժեշտության դեպքում կարելի է նաև կազմակերպել լրացուցիչ սեմինարներ:

Ֆակուլտետի դեկանը հանձնարարեց ամբիոնի վարիչներին ամբիոններում քննարկել մանկավարժական պրակտիկայի արդյունքները, գործընթացը և ներկայացնել առաջարկություններ այն առավել կատարելագործելու նպատակով:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն:
- Ի.Սիրեկանյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին՝**

Ն.Գրիգորյանի հաղորդումը ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ աշխատանքների մասին: Ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը ներկայացրեց 2021 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը (կցվում է, առդիր՝ 3 էջ):

Արտահայտվեցին՝

Խորհրդի անդամների կողմից հնչեցվեցին մի շարք հարցեր, մասնավորապես.

Մ.Երիցյանը հետաքրքրվեց, արդյոք ուսանողական խորհուրդը հետևողական է ուսանողների կողմից դասերին հաճախելու հարցում, Ս.Պիպոյանը խնդրեց հստակեցնել արդյոք հաշվետվությունը հիմնվում է նախօրոք կազմած աշխատանքային պլանի վրա, Գ.Կարապետյանը ճշտեց, արդյոք ուսանողների կողմից լինում են ինչ-որ դժգոհություններ և բողոքներ ու ի՞նչ լուծումներ են դրանք ստանում, Տ.Թանգամյանը հարցրեց, թե ի՞նչ աշխատանքներ են տարվում կարիքավոր ուսանողների համար:

Ն.Գրիգորյանը պատասխանելով հարցերին տեղեկացրեց, որ ուսանողական խորհորդն իր ուշադրության կերտրոնում է պահում ուսանողների հաճախումների հարցը, իր գործունեության մեջ առաջնորդվում է նախօրոք կազմած տարեկան աշխատանքային պլանով, ուսանողների բողոքներին և դժգոհություններին արձագանքում է ըստ հավուր պատշաճի, իսկ կարիքավոր ուսանողների հետ կապված նշեց, որ մեկ ուսանողուհի, ով չուներ միջոցներ ուսման վարձը վճարելու և եղբայրը զոհվել էր պատերազմում, ուսանողական խորհրդի ջանքերով այժմ սովորում է անվճար հիմունքներով:

Որոշեցին՝

- Ն.Գրիգորյանի հաշվետվությունը գնահատել բավարար և ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն այն մասին, որ 2022 թվականին նշվելու է բուհի 100-ամյակը, որի հետ կապված ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվելու են մի շարք միջոցառումներ: Դեկանն ընդգծեց, որ ֆակուլտետը հանդիսանում է բուհի հին ֆակուլտետներից մեկը և առավել ակտիվ մասնակցություն պետք է ունենա միջոցառումների կազմակերպման հարցում:

Ռ.Սադոյանը հանձնարարեց ամբիոնների վարիչներին յուրաքանչյուր ամսվա վերջում ներկայացնել առաջիկա ամսվա համար նախատեսված միջոցառումների ցանկը:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

7. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն առ այն, որ ֆակուլտետում պետք է ստեղծվի աշխատանքային խումբ, հանձնաժողով, որտեղ կլինեն ֆակուլտետի յուրաքանչյուր մասնագիտության գծով մեկ պատասխանատու և ովքեր կիրականացնեն ուսումնական պլանների և կրթական չափորոշիչների համեմատություն և համապատասխանեցում: Դեկանն առաջարկեց հանձնաժողովի հետևյալ կազմը.

Ն.Սամվելյան-	ա.գ.թ., դոցենտ, ԿՔԱ դեկանի տեղակալ գիտության և միջազգային համագործակցության հարցերով, ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ
Մ.Երիցյան-	ք.գ.դ., ԿՔԴՄ ամբիոնի պրոֆեսոր
Տ.Թանգամյան-	մ.գ.դ., ԿՔԴՄ ամբիոնի պրոֆեսոր
Ն.Սահակյան-	կ.գ.դ., առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի վարիչ, դոցենտ
Ա.Մինասյան-	ա.գ.թ., ԱԴՄ ամբիոնի դոցենտ
Ռ.Սիմոնյան-	կ.գ.թ., ԿՔԴՄ ամբիոնի դոցենտ
Ա.Գասպարյան-	կ.գ.թ., էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի դոցենտ

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանն առաջարկեց նաև ամբիոններում ստեղծել ենթահանձնաժողովեր, որոնց անդամները պատասխանատու կլինեն յուրաքանչյուրն իր նեղ մասնագիտացման ուղղությամբ:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 13

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Որոշեցին՝

- Հաստատել հանձնաժողովի կազմը:
- Ամբիոններում ստեղծել համապատասխան ենթահանձնաժողովներ:

8. Լսեցին՝

Ն.Սամվելյանի հաղորդումն առ այն, որ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից ներկայացված է քաղվածք՝ ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Հակոբյանի թեկնածուական ատենախոսության վերնագրի և ղեկավար նշանակելու մասին (կցվում է, առդիր՝ 1 էջ): Ն.Սամվելյանը ներկայացրեց առաջարկվող վերնագիրը և տեղեկացրեց, որ ղեկավար է առաջարկվում նշանակել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիդա Արշակի Սահակյանին:

Արտահայտվեցին՝

Տ.Թանգամյանն առաջարկեց ատենախոսության վերնագիրը փոփոխել, դարձնել ավելի հստակ, շոշափելի, իսկ քննարկումն աառավել կառուցողական դարձնելու նպատակով հրավիրել ասպիրանտին ու ղեկավարին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 12

Դեմ՝ 1

Ձեռնպահ՝ 0

Որոշեցին՝

Հրավիրել կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Լ.Հակոբյանին և մ.գ.դ., պրոֆեսոր Լ.Սահակյանին՝ ատենախոսության վերնագիրը քննարկելու և հաստատման ներկայացնելու նպատակով:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՍԱԴՈՅԱՆ**

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ 2021 Թ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱՄԲԻՈՆ	ՀՈԴՎԱԾՆԵՐ	ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ	ԴԱՍԱԳՐՔԵՐ	ԱՐՏԵՐԿՐՆԵՐՈՒՄ
Կեռնսաբանություն և քիմիա	29	5	2		14 - հոդված
Աշխարհագրություն	15	2	3		3 - հոդված 2- մենագրություն
Էկլոգիայի և կայուն զարգացման	7				6
ԸՆԴԱՄԵՆԸ	51	7	5		25

Բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկան ավարտվեց սույն թվականի դեկտեմբերի 24-ին և հոկտեմբերի 22-ին համապատասխանաբար: Այն ընթացել և ավարտվել է ըստ սահմանված կանոնակարգի: Ուսանողները հաճախել են նորմալ և կատարել իրենց տրված առաջադրանքները: Պրակտիկայի բոլոր խմբերը հենց սկզբից ներկայացված են եղել գուգլ քլասրումում, որտեղ ևս ուսանողները մեծ ակտիվություն են դրսևորել:

Դեկտեմբերի 24-28-ը ներառյալ կազմակերպվել է բակալավրիատի 4-րդ կուրսերի պրակտիկայի արդյունքների պաշտպանությունը: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ թեև ուսանողներն ունեն թղթապանակներ, որտեղ արված է պրակտիկայի արդյունքների պաշտպանությանը ներկայացվող պահանջներին համապատասխան աշխատանք, սակայն նրանք խիստ թերանում են ուսումնական նյութը աշակերտին մատուցելու, գրագետ բացատրելու մեջ, ինչը պայմանավորված է մասնագիտական ու մեթոդական գիտելիքների մեծ բացով: Գիտակցում ենք, որ այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում և ֆակուլտետի բոլոր դասախոսների փոխհամաձայնեցված քրտնաջան աշխատանքը:

Պրակտիկայի արդյունքների թվային տվյալների առումով փաստենք, որ դրանք տատանվում են միջինը 75-80-ի սահմաններում և, մեր խորին համոզմամբ, ավելի լիարժեք են արտացոլում ուսանողների մանկավարժական պատրաստվածության ընդհանուր վիճակը: Անբավարար գնահատական ստացած ուսանողներ չկան, կա միայն միայն մեկ չներկայացած ուսանող, որի քննությունը կկազմակերպվի արդեն լուծարային փուլում:

2021 թվականի ընթացքում ԿՔԱ ուսանողական խորհրդի իրականացրած ծրագրերը:

Ընդհանուր ծրագրեր՝

- Ֆակուլտետի ուսխորհրդականները մասնակցել են կամավորական աշխատանքների, որի համար նախկին ռեկտոր Ռ.Միրզախայանի կողմից ստացել են հավաստագրեր (կրեդիտային հինգ միավորով):

- Իրականացրել ենք պատերազմի մասնակիցների տվյալների հավաքագրում,որոնք ամբողջացվել են Տիգրան Պետրոսյանցի «Հայրենքի համար» գրքում:

- Մասնակցել ենք մի շարք համալսարանական գիտաժողովների, սեմինարների և միջֆակուլտետային ծրագրերի:

- Ֆակուտետի ուսանողները մասնակցել են ՀԱԱՀ-ի կողմից կազմակերպված ամառային ճամբարին, և մեր համալսարանի թիմի մեծ տոկոս են կազմել:

- Մասնակցություն ենք ունեցել նաև կենտրոնական ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված մի շարք ամառային արշավների:

- Ֆակուլտետի փոխնախագահ Մարիամ Սարգսյանը եղել է մեր համալսարանից միակ ընտրված մասնակիցը, ով հնարավորություն է ունեցել մասնակցելու ՀՊՏՀ ուսումնագիտական հանձնաժողովի կողմից անցկացվող «Inspired» միջբուհական աշխատաժողովին և իր թիմը ճանաչվել է աշխատաժողովի հաղթող:

- Ուսանողները մասնակցել են նաև համալսարանում անցկացված «Ուսանողական ինքնավարություն» , «Հասարակական գործունեությունն ուսանողի կյանքում և ժամանակի ճիշտ կառավարում» սեմինարներին և ձեռք բերել մի շարք գիտելիքներ:

- Դիմավորել ենք առաջին կուրսեցիներին և կազմակերպել ՈՒԽ հանդիպում:

- Հեռակաների հոտ ունեցել ենք հանդիպում և իհարկե մեր բոլոր միջոցառումներին ընդգրկել ենք նաև նրանց:

Ակումբ/հանձնաժողովներ:

Բանավեճի ակումբ՝

- Դարձել ենք համալսարանի ներբուհական առաջնության հաղթող:
- Ֆակուլտետի ներսում կազմակերպել ենք իրազեկող սեմինարներ:
- Ունեցել ենք ներֆակուլտետային խաղեր:
- Դասախոսների հետ համատեղ իրականացրել ենք «Բանավիճում են դասախոսները» ծրագրի երկու հանդիպում:

Մշակույթի ակումբ՝

- Իրականացրել ենք «Գուշակիր մեղեդին» խորագրով խաղեր:
- Ակումբի անդամները նկարել են տարբեր նկարներ, որոնք հրապարակվել են ֆակուլտետի էջում:

Ինտելեկտուալ ակումբ՝

- Կազմակերպել ենք մի շարք ինտելեկտուալ խաղեր:
- Ֆակուլտետի թիմը մասնակցել է միջբուհական և ներբուհական առաջնությունների:
- Իրականացվել է սեմինարներ:

Գրականասերների ակումբ՝

- Իրականացվել է ասմունքի երեկոներ:
- Գրքի քննարկումներ են անցկացվել:
- Ֆակուլտետի գրականասերները մասնակցել են ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված տեսահոլովակի նկարահանմանը:
- Մասնակցություն ենք ունեցել մի շարք գրողների հետ հանդիպումներին:
- Մասնակցել ենք ակումբում տեղի ունեցող խաղերի:

Սպորտի հանձնաժողով՝

- Իրականացվել ենք շախմատի ուսուցողական սեմինար:
- Ուսանողները ներգրավված են եղել համալսարանական գրեթե բոլոր թիմերում:
- Աղջիկների վոլեյբոլի առաջնությունում հաղթող է ճանաչվել, որում կային նաև մեր ուսանողները:

Լրատվական հանձնաժողով՝

- Ներկայացրել է զոհերի մասին նյութեր:
- Հանձնաժողովի շրջանակներում եղել է ֆակուլտետի բոլոր կամավորների հետ հարցազրույցներ:
- Ներկայացվել է ֆակուլտետի ուսխորհրդականների մասին նյութեր:
- Եղել են դասախոսների հետ հարցազրույցներ:

- Լուսաբանվել են ֆակուլտետում իրականացվող բոլոր միջոցառումները:
- Էջում տեղադրված կամավորների նյութերի շնորհիվ մի տղա գտել է մեր ուսանողներից մեկին ,ով կռվի դաշտում փրկել է իր կյանքը (կազմակերպել ենք իրենց հանդիպումը), ուսանողը Շմավոն Ադամյանն էր::

Կազմակերպչական հանձնաժողով՝

- Օգնել են բոլոր ակումբների և հանձնաժողովների աշխատանքներում:
- Զբաղվել են ֆակուլտետի ուսանողական խորհրդի բոլոր աշխատանքների կազմակերպմամբ:

Կազմակերպել ենք «Լավագույն ուսանող» մրցույթի ընտրությունները:

Ֆակուլտետային ընտության ժամանակ իրենց թեկնածությունն են առաջադրել երկու ուսանողուհի , որի ժամանակ ձայների մեծամասնությամբ հաղթող է ճանաչվել կենսաբանության բաժնի մագիստրոսական համակարգի առաջին կուրսի ուսանողուհի Քնարիկ Համբարձումյանը:Ով հաղթող է ճանաչվել նաև ընտրության հաջորդ փուլում և դարձել ՀՊՄՀ լավագույն ուսանող :

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

2022թ. փետրվարի 2-ի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգ

1. Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի վերաբերյալ ամփոփիչ տեղեկատվություն: Զեկ. Ռ. Սադոյան
2. 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: Զեկ. Ռ. Սադոյան
3. Բակալավրիատի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի թղթապանակների պաշտպանության արդյունքների ամփոփում: Զեկ Ի. Սիրեկանյան
4. Բակալավրիատի հեռակա ուսուցման 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն: Զեկ. Վ. Հովսեփյան
5. Google Classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների(ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) և առկա ուսուցման համակարգում 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Զեկ. Ամբիոնների վարիչներ
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Սադոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի 16 (տասնվեց) անդամ

Նիստին ներկա էին նաև համալսարանի կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ՝ Ս.Ասատրյանը և իրավաբանական կենտրոնի ղեկավար Գ.Վարդանյանը

1. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի վերաբերյալ: Ֆակուլտետի դեկանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ կան վերականգնվող թվով 7 ուսանող: Հեռակա մագիստրատուրայի «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտության 3-րդ կուրսի ամփոփիչ

ատեստավորումը կայանալու է սույն թվականի փետրվարի 4-ին: Ռ.Սադոյանը տեղեկացրեց նաև, որ նշված կուրսի 1 ուսանող՝ Վիկտոր Եփրեմյանը, որը ուսումնաությունը շարունակելու նպատակով Էրազմուս+ շարժունության ծրագրով մեկնել էր Ավստրիայի բնական պաշարների և կենսաբանական գիտությունների համալսարան, վարակվել էր Covid 19-ով, ինչի պատճառով նախատեսվածից ուշ է վերադարձել Հայաստան, բացի այդ, նշված համալսարանը համաճարակային իրավիճակով պայմանավորված անցել է հեռավար կրթության, որի արդյունքում Վ.Եփրեմյանի փաստաթղթերի հետ կապված առաջացել են մի շարք խնդիրներ և ուսանողի կրեդիտների ճանաչման գործընթացը հետաձգվում է, արդյունքում ինքը չի հասցնում մասնակցել ամփոփիչ ատեստավորման:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ս.Պիպոյանը, Ս.Ասատրյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Ասատրյանի հաղորդումն առ այն, որ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետ Գ.Բարսեղյանի կողմից հեռակա բակալավրիատի էլեկտրոնային մատյաններում թույլ են տրվել սխալներ՝ ուսանողների ցանկում եղել են ընդգրկված նախկինում հեռացված, ինչպես նաև չեն ընդգրկվել վերականգնված ուսանողները, որի մասին ֆակուլտետի դեկանի կողմից բուհի ռեկտորին ներկայացվել է համապատասխան զեկուցագիր: Ս.Ասատրյանը ներկայացրեց նաև Գ.Բարսեղյանի կողմից տրված բացատրագիրը: Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետը տեղեկացրեց խորհրդի անդամներին և Գ.Բարսեղյանին, որ ներկայացված զեկուցագիրը ընթացք է ստացել և իրավաբանի ու բուհի ղեկավարության կողմից կտրվի համապատասխան արձագանք:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Ն.Սամվելյանը, Ա.Մինասյանը, Գ.Կարապետյանը, Գ.Բարսեղյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին: Դեկանը ներկայացրեց քննությունների, անբավարար, բավարար, լավ և գերազանց ստացած ուսանողների թիվը, ինչպես նաև տեղեկացրեց, որ լուծարային քննաշրջանը կմեկնարկի փետրվարի 9-ից, կկազմվի համապատասխան ժամանակացույց, որի մասին կտեղեկացվեն դասախոսները և անբավարար գնահատված, չներկայացած ուսանողները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

Ի.Սիրեկանյանի հաղորդումը բակալավրիատի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի թղթապանակների պաշտպանության արդյունքների մասին: Ի.Սիրեկանյանը ներկայացրեց իր հաշվետվությունը (կցվում է):

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ս.Պիպոյանը, Ա.Մինասյանը: Ա.Մինասյանը տեղեկացրեց, որ ներկայացրել է առաջարկներ մանկավարժական պրակտիկայի հետ կապված, որոնց մի մասը գտել է իր կիրառումը, իսկ մյուսը դեռևս մնացել է անկատար:

Ռ.Սադոյանը հանձնարարեց Ն.Սամվելյանին և Ա.Փիլթակյանին վերհանել Ա.Մինասյանի առաջարկությունները, պարզել, թե որոնք են իրագործվել և որոնք են ենթակա իրագործման, դրանց հետագա քննարկման և ներդրման նպատակով:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

5. **Լսեցին՝**

Վ.Հովսեփյանի հաղորդումը բակալավրիատի հեռակա ուսուցման 4-րդ և 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Վ.Հովսեփյանը հայտնեց, որ նշված կուրսերի պրակտիկան կապված դպրոցների ծանրաբեռնվածության և համաճարակային իրավիճակի հետ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից տեղափոխվել էր փետրվար-մարտ ամիսներին: Հեռակա ուսուցման համակարգի պրակտիկայի ղեկավարը տեղեկացրեց, որ 5-րդ կուրսի ուսանողների պարկտիկան կմեկնարկի սույն թվականի փետրվարի 7-ից և կավարտվի մարտի 4-ին, որին կհաջորդի թղթապանակների պաշտպանության գործընթացը, իսկ 4-րդ կուրսերի պրակտիկայի կազմակերպման համար ժամկետները հստակեցվում են բուհի կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ, որից ակնկալվում է ստանալ համապատասխան շրջաբերական: Բացի այդ, Վ.Հովսեփյանը խնդրեց ամբիոնների վարիչներին դասաաշխման ժամանակ մեկ դասախոսի խմբում 7-8 ուսանողից ավել չընդգրկել՝ դպրոցներում խնդիրներ չառաջանալու նպատակով:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին՝**

Ամբիոնների վարիչների (Ս.Պիպոյան, Ն.Սամվելյան, Ռ.Սադոյան, Ն.Սահակյան) հաղորդումը Google Classroom հարթակում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն,

առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) և առկա ուսուցման համակարգում 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: Ամբիոնների վարիչները ներկայացրեցին Google Classroom հարթակում դասախոսների կողմից կատարած աշխատանքները, տեղեկացրեցին, որ նկատվել են մասնակի վրիպակներ, որոնք, սակայն, կրում են տեխնիկական բնույթ և արդեն իսկ գտնվում են շտկման փուլում:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

7. **Լսեցին՝**

Ն.Սամվելյանի հաղորդումն առ այն, որ ֆակուլտետի խորհրդի քննարկմանն է ներկայացվում կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Ելենա Ամիրյանի թեկնածուական ատենախոսության համար առաջարկվող թեման, իսկ աշխատանքի ղեկավար է առաջարկվում նշանակել կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանին (քաղվածք ամբիոնի 2022 թվականի հունվարի 31-ի նիստից, կցվում է):

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ հայցորդը առողջական խնդիրների պատճառով ներկա չէ նիստին և հակիրճ ներկայացրեց առաջարկվող թեմայի նպատակը ու խնդիրները:

Որոշեցին՝

«Արարատի և Արմավիրի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկների բեղունությունը և դրա վրա ազդող գործոնները» թեման ներկայացնել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը, որպես կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Ե.Ամիրյանի թեկնածուական ատենախոսության թեմա, իսկ ղեկավար առաջարկել նշանակել կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՍԱՂՈՅԱՆ**

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Հ/Հ	Դասախոսի անուն, ազգանուն	Դասընթացների ընդհանուր թիվը	Առարկայական նկարագրի առկայություն	Ուսումնական նյութեր	Հարցաշար
1.	Պիպոյան Սամվել	3	+	+	+
			+	+	+
			+	+	+
2.	Թանգամյան Տիգրան	3	+	+	+
			+	+	+
			+	+	+
3.	Երիցյան Մեժլում	6	+	+	+
			+	+	+
			+	+	+
			+	+	+
			+	+	+
			+	+	+
4.	Առուստամյան Արմեն	4	+	+	+
			+	+	+
			+	+	+
			+	+	+
5.	Կնյազյան Նիկոլայ	1	+	+	+
6.	Բաբախանյան Աշոտ	3	+	+	+
			+	+	+
			+	+	+
7.	Զիրոյան Արտաշես	2	+	+	+
			+	+	+

8.	Սիմոնյան Ռուզաննա	5	+	+	+
			+	+	+
			+	+	+
			+	+	+
			+	+	+
9.	Կիրակոսյան Ալվարդ	2	+	+	+
			+	+	+
10.	Հովսեփյան Վարդուհի	4	+	+	+
			+	+	+
			+	+	+
			+	+	+
11.	Միրեկանյան Ինեսսա	3	+	+	+
			+	+	+
			+	+	+
12.	Հարությունյան Նատալյա	2	+	+	+
			+	+	+
13.	Դալլաքյան Մարինե	1	+	+	+
14.	Կարապետյան Քրիստինե	1	+	+	+

Դասախոսների մեծ մասի մոտ նկատվել են հետևյալ թերությունները.

1. Առարկայական նկարագրերի մեջ ամբիոնի նիստի հաստատման օրվա ոչ ճիշտ գրանցում կամ բացակայում:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՆՐԱՆՑ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N8

2022թ. մարտի 7-ի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգ

1. Առկա ուսուցման համակարգում լուծարային փուլերի արդյունքների ամփոփում: Զեկ. Ռ. Սադոյան
2. Տեղեկատվություն մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Զեկ. Ա. Փիլթակյան
3. Տեղեկատվություն առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և բակալավրիատի 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: Զեկ. Ի. Սիրեկանյան
4. Տեղեկատվություն հեռակա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի և 5-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակների պաշտպանության գրաֆիկի քննարկում: Զեկ. Վ. Հովսեփյան
5. Տեղեկատվություն բակալավրիատի 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: Զեկ. Ամբիոնների վարիչներ
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Սադոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի 16 (տասնվեց) անդամ

1. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն առկա ուսուցման համակարգում լուծարային 2 փուլերի արդյունքների ամփոփման մասին: Դեկանը տեղեկացրեց, որ առկա համակարգում 3 ուսանող ենթակա են հեռացման, ինչպես նաև կան ուսանողներ, ովքեր պայմանականորեն տեղափոխվել են 2-րդ կիսամյակ և ունեն 12 կրեդիտի պարտք:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ս.Պիպոյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ա.Փիլթակյանի հաղորդումը մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Դեկանի տեղակալը հայտնեց, որ հեռակա մագիստրատուրայում կա 1 մասնագիտություն՝ «Լանդշաֆտային պլանավորում», որի 1-ին կուրսի դասերը մեկնարկելու են սույն

թվականի մարտի 9-ից, իսկ 2-րդ կուրսինը՝ մարտի 2-ից, դասացուցակները պատրաստ են և հաստատված, ինչպես նաև տրամադրված են ուսանողներին և դասախոսներին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ի.Սիրեկանյանի հաղորդումն առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսերում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման և բակալավրիատի 2-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարը տեղեկացրեց, որ 3-րդ կուրսերի պրակտիկան կմեկնարկի սույն թվականի մարտի 28-ից՝ 6 շաբաթ տևողությամբ, իսկ մագիստրատուրայի 1-ին կուրսի պրակտիկան՝ մարտի 30-ից՝ 3 շաբաթ տևողությամբ: Բակալավրիատի 2-րդ կուրսի հետ կապված Ի.Սիրեկանյանը տեղեկացրեց, որ կան վերականգնված ուսանողներ, որոնց վերականգնամ հրամանի հետ կապված, իրենց պրակտիկան մեկնարկեց ավելի ուշ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը հեռակա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի ընթացքի և 5-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակների պաշտպանության գրաֆիկի մասին: Դեկանը տեղեկացրեց, որ 5-րդ կուրսերի պաշտպանությունը տեղի է ունենալու մարտի 9-ին և 10-ին, ժամը 10:30-ից, իսկ 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկան մեկնարկել է փետրվարի 28-ից և այժմ ընթացքի մեջ է:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն առ այն, որ բակալավրիատի 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը կներկայացնեն ամբիոնների վարիչները:

Ս.Պիպոյանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ «Կենսաբանություն» մասնագիտության առկա 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների ընթացքը բավարար է, մագստրատուրայի 1-ին կուրսում 1 ուսանողուհի (Քնարիկ Համբարձումյան) պետք է մեկնի արտասահման՝ ուսումնառությունը շարունակելու, և նպատակահարմար կլինի, որ իր աշխատանքը կատարի այնտեղ, իսկ 2-րդ կուրսի 1 ուսանողի (Տիգրան Կարապետյան) աշխատանքը բավականին թերի է, սակայն դեռևս ժամանակ կա առկա թերությունները շտկելու համար: Հեռակա բակալավրիատում 2 մասնագիտությունների ուղղությամբ էլ («Կենսաբանություն», «Քիմիա») աշխատանքներն ընթանում են և առաջիկայում նախատեսված է լսել ուսանողների հաշվետվությունները կատարածի վրաբերյալ, սակայն մտահոգիչ է 1 ուսանողի (Անահիտ Գալստյան) վիճակը, որը բավականին ուշ է դիմել իր ղեկավարին:

Ն.Սամվելյանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ բակալավրիատում և մագիստրատուրայում աշխատանքներն ընթանում են բավարար, սակայն

բակալավրիատի 1 ուսանող (Տաթևիկ Մուրադյան) կապ չի հաստատում իր ղեկավարի հետ, ինչի պատճառով կարող է տուժել իր աշխատանքը:

Ռ.Սադոյանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ «Շրջակա միջավայրի գիտություններ» մասնագիտության և՛ բակալավրիատի և՛ մագիստրատուրայի ուսանողների աշխատանքների վիճակը բավարար է:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին՝**

Ն.Սամվելյանի հաղորդումն ԱԴՄ ամբիոնի դոցենտներ Ս.Կրոյանի, Ս.Խաչատրյանի և պրոֆեսոր Ա.Խոեցյանի «Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով» ուսումնական ձեռնարկը հրատարկման երաշխավորելու հարցի վերաբերյալ: Նա նշեց, որ ձեռնարկը քննարկվել է ամբիոնի 2 նիստերում, ամբիոնի դասախոսների կողմից ներկայացվել են առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել հեղինակների կողմից ձեռնարկի վերջնական տարբերակի վրա աշխատելիս: Ն.Սամվելյանը նաև նշեց, որ ուսումնական ձեռնարկը մայրենի լեզվով հրատարակվող առաջին փորձն է և անհրաժեշտ է մեր ուսանողներին:

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Ս.Պիպոյանը, Վ.Հովհաննիսյանը, ովքեր դրական կարծիք հայտնեցին ձեռնարկի վերաբերյալ:

Որոշեցին՝

Հաշվի առնելով ֆակուլտետի խորհրդի անդամների կարծիքը՝ Ս.Կրոյանի, Ս.Խաչատրյանի և Ա.Խոեցյանի «Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

7. **Լսեցին՝**

Ն.Սամվելյանի հաղորդումն առ այն, որ «Քիմիա» առարկան դասավանդող ուսուցչական համայնքի կողմից ներկայացվել է դիմում-խնդրանք քիմիայի ուսուցիչների պատրաստման վերաբերյալ: Դեկանի տեղակալի հաղորդմամբ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման ամբիոնի կողմից ստացվել է առաջարկություն սույն դիմում-խնդրանքի վերաբերյալ (կցվում է):

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՍԱԴՈՅԱՆ**

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Քիմիա» առարկան դասավանդող ուսուցչական համայնքի կողմից դիմում-խնդրանքի վերաբերյալ

Հաշվի առնելով հանրակրթական դպրոցների շրջանավարտների շրջանում վերջին տարիներին բնագիտական առանձին առարկաների, մասնավորապես կենսաբանություն և քիմիա, նկատմամբ հետաքրքրության պակասը և այդ առարկաների գծով ՀՊՄՀ ընդունվողների տարեցտարի զգալի նվազման միտումները, կարելի է կանխատեսել, որ առաջիկա տարիներին հանրակրթական դպրոցներում նկատվելու է ինչպես «Քիմիա», այնպես էլ «Կենսաբանություն» առարկաներ դասավանդող ուսուցիչների բացակայություն կամ զգալի պակաս: Այս առումով առաջարկում ենք հետևյալը՝ ՀՊՄՀ-ում ներդնել ինտեգրված կրթական ծրագիր «Կենսաբանություն և քիմիա» (կամ «Կենսաբանություն՝ լրացուցիչ քիմիա») մասնագիտության գծով՝ հնգամյա տևողությամբ (4+1), որի շրջանավարտներին միաժամանակ կշնորհվի կենսաբանության և քիմիայի ուսուցչի որակավորում: Նման ինտեգրված կրթական ծրագրի իրականացման հնարավորությունը նախատեսված է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի դրույթներով:

Եթե վերոնշյալ առաջարկությունն ընդունելի կլինի ՀՀ ԿԳՄՍ-ի կողմից և համապատասխան փոփոխություններ կկատարվեն բուհական մասնագիտությունների և դրանց ընդունելության պահանջների ցանկում, ապա ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնը պատրաստ է ձեռնամուխ լինել «Կենսաբանություն և քիմիա» (կամ «Կենսաբանություն՝ լրացուցիչ քիմիա») մասնագիտության ինտեգրված կրթական ծրագրի ուսումնական պլանի մշակման ու հետագա ներդրման աշխատանքներին մինչև 2022-2023 ուսումնական տարին:

Նման կրթական ծրագրի առկայության դեպքում ՀՀ ԿԳՄՍ կարող է արդեն ՀՊՄՀ-ին տրամադրել նպատակային տեղեր վերոնշյալ մասնագիտության գծով, որտեղ բուհ-ի կողմից սահմանված մրցութային պահանջներով (հարցազրույց) կարող են ընդունվել տարածքային կառավարման մարմինների կամ համայնքների կողմից գործուղված դիմորդները: Վերջիններիս հետագա աշխատանքային գործունեությունը հանրակրթական ուսումնական հաստատություններում կարող է կանոնակարգվել յուրաքանչյուր ուսանողի և ՀՊՄՀ (կամ ՀՀ ԿԳՍՄ, տեղական կամ տարածքային ինքնակառավարման մարմինների) միջև կնքված համապատասխան պայմանագրերի միջոցով:

«Քիմիա» առարկան դասավանդող ուսուցչական համայնքի կողմից ներկայացված մյուս առաջարկությունները, որոնք նույնպես արժանի են հավանության, կարող են կարգավորվել և իրականացվել միայն ՀՀ ԿԳՄՍ-ի կողմից սահմանված օրենսդրական կամ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա:

ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և նրանց

դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

վարիչ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյան

Բացատրագիր

Ս.Զ. Կրոյանի, Ա.Վ. Խոյեցյանի, Ս.Ժ. Խաչատրյանի, Գ.Հ. Սանոսյանի ,,Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով,, Մենագրություն – ուսումնական ձեռնարկի տպագրության վերաբերյալ

1. Ձեռնարկը կոչվում է մենագրություն – ուսումնական ձեռնարկ, որովհետև օգտագործվել են հեղինակների կատարած հետազոտությունները և կազմվել է բակալավրիատի 2-րդ կուրսի ,,Հողերի աշխարհագրություն,, դասընթացի ծրագրին համապատասխան:
2. Ամբիոնի նիստի որոշման համաձայն հաստատվել է ,, Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով վերնագիրը, սակայն ուսանողների համար դյուրին դարձնելու համար, այն տպագրվել է երկու մասով՝ ,,Հողագիտության հիմունքներ,, և ,,Հողերի աշխարհագրություն,, առանձին բաժիններով:
3. Ձեռնարկի 2-րդ մասի աշխատանքներին իր մասնակցությունն է ունեցել նաև Գնել Սանոսյանը:

գ.գ.թ., դոցենտ Ս,Զ. Կրոյան

07.11.2022թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N10

2022թ. մայիսի 3-ի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգ

1. Ամփոփիչ ատեստավորման քննությունների գրաֆիկների քննարկում և հաստատում, հանձնաժողովների նախագահների և անդամների ներկայացում: Զեկ. Ռ.Սադոյան
2. Հեռակա ուսուցման ուսանողների ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: Զեկ. Ամբիոնների վարիչներ
3. Տեղեկատվություն բակալավրիատի 4-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստավորման վերաբերյալ: Զեկ. Ամբիոնների վարիչներ
4. Տեղեկատվություն բակալավրիատի առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական և ուսումնական պրակտիկաների արդյունքների վերաբերյալ: Զեկ. Ի.Սիրեկանյան
5. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Սադոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի 15 (տասնհինգ) անդամ

1. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն ամփոփիչ ատեստավորման քննությունների գրաֆիկների և հանձնաժողովների նախագահների ու անդամների մասին: Ֆակուլտետի դեկանը ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման ժամանակացույցը (կցվում է, առդիր՝ 3 էջ), հանձնաժողովների անդամներին ու նախագահներին (տե՛ս ռեկտորի 2022 թվականի ապրիլի 21-ի թիվ 1244-Ա հրաման):

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնների վարիչները կներկայացնեն հեռակա ուսուցման ուսանողների ավարտական աշխատանքների ընթացքի և առկա բակալավրիատի 4-րդ ու մագիստրատուրայի 2-րդ կուրսերի ավարտական

աշխատանքների և մագիստրոսական թեզերի ատեստավորման վերաբերյալ տեղեկատվությունը:

ԿՔԴՄ ամբիոնի վարիչ Ս.Պիպոյանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ ամբիոնում կազմակերպած նախապաշտպանությունների արդյունքը բավարար է, առկա ուսուցման համակարգում երկու ուսանող՝ Տիգրան Կարապետյան (մագիստրոս, «Կենսաբանություն») և Քնարիկ Զանդարյան (բակալավր, «Կենսաբանություն») ամբիոնի որոշմամբ իրենց աշխատանքներում համաձայն արված նկատառումների պետք է կատարեն համապատասխան փոփոխությունները և նորից ներկայացնեն, իսկ հեռակա համակարգի երեք ուսանողի՝ Անահիտ Գալստյանի, Դիանա Քոչարյանի և Աստղիկ Միքայելյանի աշխատանքները ևս լրամշակման և ներկայացման կարիք ունեն: Ինչ վերաբերվում է առկա բակալավրիատի 4-րդ ու մագիստրատուրայի 2-րդ կուրսերի ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին, ապա դրանք բոլորը երաշխավորվել են հրապարակային պաշտպանության:

ԱԴՄ ամբիոնի վարիչի ժ/պ Ն.Սամվելյանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ ամբիոնում կազմակերպած նախապաշտպանությունների արդյունքը ևս բավարար է, բոլոր աշխատանքները երաշխավորվել են հրապարակային պաշտպանության:

Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ իրենց ամբիոնում ավարտական աշխատանք են կատարում բակալավրիատի 4 ուսանող (2 առկա և 2 հեռակա), մագիստրատուրայի 1 ուսանող: Ն.Սահակյանի հաղորդմամբ Մերի Բեգլարյանի (բակալավր, «Կենսաբանություն») աշխատանքը պետք է նորից քննարկվի ամբիոնում, իսկ մնացած 4 ուսանողի աշխատանքների ընթացքը բավարար է և դրանք երաշխավորվել են հրապարակային պաշտպանության:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ի.Սիրեկանյանի հաղորդումը բակալավրիատի առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժահետազոտական և ուսումնական պրակտիկաների արդյունքների վերաբերյալ: Պրակտիկայի ղեկավարը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ բակալավրիատի 2-րդ և 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկան ընթացքի մեջ է, ինքը պարբերաբար այցելում է դպրոցներ, կատարում դասալսումներ: Ի.Սիրեկանյանը հայտնեց, որ մագիստրատուրայի 1-ին կուրսերի պրակտիկան ավարտվել է ապրիլի 19-ին: Ընդհանուր առմամբ պրակտիկաների գործընթացն ընթանում է իր բնականոն հունով:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

ԿՔԱ ֆակուլտետի որակի պատասխանատու Ա.Մինասյանի հաղորդումն առ այն, որ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ կազմակերպվել է սեմինար-քննարկում կապված SWOT վերլուծության կազմման սկզբունքների հետ: Ա.Մինասյանը տեղեկացրեց, որ SWOT վերլուծության մասին ներկայացումներով հանդես են եկել ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարները՝ Ի.Սիրեկանյանը և Վ.Հովսեփյանը, ովքեր նաև պատասխանեցին հանդիպմանը ներկա մեթոդիստների հարցերին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին՝**

Ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալ Ն.Սամվելյանի հաղորդումը՝ ՀՊՄՀ Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարինե Մաթոսյանի դոկտորական ատենախոսության թեմայի առաջադրման վերաբերյալ: Սամվելյանը նշեց, որ ստացել է ԱԴՄ ամբիոնի 2022թ մարտի 30-ի թիվ 12-րդ նիստի արձանագրությունից քաղվածք առ այն, որ ամբիոնում առաջադրվել և քննարկվել է Մ. Մաթոսյանի դոկտորական ատենախոսության «ՀՀ տարածքային համաչափ զարգացման աշխարհագրական ուցիչների համակարգը ռեգիոնալ քաղաքականության իրականացման գործընթացում» թեման:

Մ.Մաթոսյանը հակիրճ ներկայացրեց նշված թեմայի շրջանակներում կատարվելիք հետազոտության արդիականությունը, նպատակը, խնդիրները, բովանդակությունն ու կատարված աշխատանքները: Կազմակերպվեց քննարկում:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ն.Սամվելյանը, Տ.Թանգամյանը, Ա.Մինասյանը, Ս.Պիպոյանը, ովքեր հավանություն տվեցին առաջարկվող թեմային:

Որոշեցին՝

Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին քննարկելու և հաստատելու աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարինե Մաթոսյանի «ՀՀ տարածքային համաչափ զարգացման աշխարհագրական ուցիչների համակարգը ռեգիոնալ քաղաքականության իրականացման գործընթացում» վերնագրով դոկտորական ատենախոսության թեման:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՍԱԴՈՅԱՆ**

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N11

2022թ. հուլիսի 1-ի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգ

1. Առկա և հեռակա ուսուցման համակարգերում ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների ամփոփում: Զեկ. Ռ.Սադոյան
2. 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների ներկայացում և քննարկում: Զեկ. Ն.Սամվելյան
3. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: Զեկ. Ռ.Սադոյան
4. Մագիստրատուրայի առկա 1-ին և հեռակա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: Զեկ. Ամբիոնների վարիչներ
5. Բակալավրիատի առկա 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանության արդյունքների ամփոփում: Զեկ. Ի.Սիրեկանյան
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Սադոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի 15 (տասնհինգ) անդամ

1. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն առկա և հեռակա ուսուցման համակարգերում ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին: Ֆակուլտետի դեկանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ առկա ուսուցման համակարգի մագիստրատուրայում 2021-2022 ուսումնական տարում եղել է թվով 27 շրջանավարտ, բակալավրիատում՝ 40, իսկ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում՝ 43 (տվյալները կցվում են, առդիր՝ 2 էջ):

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների մասին: Դեկանը ներկայացրեց նախագահների հաշվետվությունները (կցվում է):

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը մագիստրատուրայի առկա 1-ին և հեռակա 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ: Դեկանը տեղեկացրեց, որ առկա մագիստրատուրայում («Աշխարհագրություն», «Լանդշաֆտային պլանավորում») և հեռակա մագիստրատուրայում («Լանդշաֆտային պլանավորում») մասնագիտությունների ուսանողների հետազոտական աշխատանքներն ընթանում են ըստ նախապես կազմած աշխատանքային պլանի:

Ս.Պիպոյանի հաղորդումը մագիստրատուրայի առկա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ «Կենսաբանություն» մասնագիտության բոլոր 5 և «Քիմիա» մասնագիտության 2 ուսանողի հետազոտական աշխատանքները ևս ընթանում են նորմալ և համապատասխանում են կատարման գրաֆիկին:

Ս.Շողերյանի հաղորդումը մագիստրատուրայի առկա 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ: Ամբիոնի վարիչի հաղորդմամբ «Շրջակա միջավայրի գիտություններ» մասնագիտության բոլոր ուսանողների աշխատանքներն ընթանում են ըստ նախապես կազմած գրաֆիկի:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին՝**

Ի.Սիրեկանյանի հաղորդումը բակալավրիատի առկա 2-րդ և 3-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանության արդյունքների մասին: Պրակտիկայի ղեկավարը տեղեկացրեց, որ բակալավրիատի «Աշխարհագրություն» մասնագիտության 2-րդ կուրսում 10 ուսանող ստացել է «լավ» գնահատական, իսկ 9-ը՝ «բավարար», «Կենսաբանություն» մասնագիտության 2-րդ կուրսում պաշտպանությանը չի ներկայացել 4 ուսանող, 2 ուսանող ստացել է «լավ» գնահատական, իսկ 5-ը՝ «բավարար», «Քիմիա» մասնագիտության 2-րս կուրսում 1 ուսանող ստացել է «գերազանց», իսկ 2-ը «լավ» գնահատական: Պրակտիկայի ղեկավարի հաղորդմամբ «Աշխարհագրություն»

մասնագիտության 3-րդ կուրսում 8 ուսանող ստացել է «լավ», իսկ 6 ուսանող «բավարար» գնահատական, «Կենսաբանություն» մասնագիտության 3-րդ կուրսում 4 ուսանող ստացել է «գերազանց», 8-ը «լավ» և 6-ը «բավարար» գնահատական:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին՝**

Ա.Մինասյանի հաղորդումն այն մասին, որ ինքը մասնակցել է վերապատրաստման՝ ՄԿԾ-ների վերլուծության վերաբերյալ: Ա.Մինասյանը հակիրճ ներկայացրեց վերապատրաստման ժամանակ քննարկված առանցքային հարցերը և տեղեկացրեց, որ առաջիկայում ևս նախատեսվում է մասնակցություն նմանատիպ վերապատրաստումներին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

7. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը պրոֆեսորադասախոսական կազմի 2022-2023 ուսումնական տարվա ծանրաբեռնվածության մասին: Ֆակուլտետի դեկանը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ դիմորդների թիվը բավականի քիչ է եղել, ինչի արդյունքում ամբիոններում տեղի է ունեցել ընդհանուր ժամաքանակի նվազում և որպես հետևանք սպասվում են կրճատումներ դասախոսների շրջանում:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՍԱԴՈՅԱՆ**

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**